Վահան Թեքեյան

Իմ վերջին սերս . . .

Իմ վերջին սերս, օ՜հ, այնքան առաջինին դեռ նման,
Սիրտս դեռ տաք է քեզմով ու կտանիմ քեզ հիմա
Զգուշաքյլ, երկյուղած՝ մոխրի մը պես սրբազան
Ուրկե փյունիկ մը հառնել ու դեռ տանջել զիս կրնա . . .

Իմ վերջին սերս, օ՜հ, թոչո՛ւն չորս օր ապրած, չորս գիշեր,
Իմ և անոր աչքերուն, շարժումներուն ալ միջև,
Եվ մատնված տանջանքի, երբ դեռ հազիվ կբխեր
Երգին աղբյուրը կուրծքեն, հազի՜վ բացած էր ան թև . . .

Ի՜նչպես անուշ եղար դուն և ան ի՜նչպես կրցավ քեզ
Խոցել բառով մը միակ, երբ մոտեցր քիչ մ'իրեն,
Ինք որ տեսած էր զքեզ, քեզի ժպտած հեռուեն . . .
Եվ դուն ի՜նչպես, վերջին սեր, եղար խոնարհ, եղար հեզ,
Ի՜նչպես անձայն, անպաշտպան ծռեցիր վիզդ ու ինկար,
Ի՜նչպես մնաց սրտիս մեջ քու մահու ճիչդ երկար . . . :